Կադաստրի կոմիտեի 2027 թվականի բյուջետային հայտի բացատրագիր

Ընդամենը ծախսեր

Աշխատավարձի ֆոնդ

Կոմիտեի համակարգում հաստիքային աշխատակիցների ամսական աշխատավարձի ֆոնդը կազմում է 232,951.1 հազ.դրամ, որից քաղաքացիական ծառայողներինը՝ 144,795.4 հազ.դրամ, այլ պաշտոններինը՝ 88,155.7 հազ.դրամ:

Ընդամենը աշխատավարձի ֆոնդը կազմում է 3,023,828.8 հազ. դրամ:

Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ

Պարգևատրման ֆոնդը կազմում **292,646.9 հազ. դրամ:**

Քաղաքացիական ծառայողների պարգևատրում

Կոմիտեի համակարգում քաղաքացիական ծառայողների **պարգևատրման ֆոնդը** կազմում է **176,749.7 հազ.դրամ:**

Էներգետիկ ծառայություններ

ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի թիվ 629-Ն որոշմամբ նախատեսված նորմաների համաձայն Կադաստրի կոմիտեի համակարգի գործունեության իրականացման համար **էներգետիկ ծառայությունների գումարը կազմում է՝** *էլեկտրաէներգիայի* – 65,000.0 հազ.դրամ, *ջեռուցման և վառելիքի* – 25,000.0 հազ.դրամ, **ընդամենը – 90,000.0 հազ.դրամ:**

Կոմունալ ծառայություններ

Ջրամատակարարման և ջրահեռացման ծախսեր

Կադաստրի կոմիտեի համակարգի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ծախսը՝ 1,562.0 հազ.դրամ:

Դեռատիզացիայի ծախսեր Դեռատիզացիայի ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով կնքված պայմանագրերը՝ ընդամենը ծախսերը կկազմեն 500.0 հազ.դրամ:

Ընդամենը կոմունալ ծառայությունների գումարը կազմում է 2,062.0 հազ.դրամ:

Կապի ծառայությունների վճար

Կադաստրի կոմիտեի համակարգի կապի ծառայության ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1956-Ն որոշման պահանջների համաձայն՝ գումարը կազմում է **ընդամենը 25,000.0 հազ.դրամ,** նախկին տարիների նկատմամբ աճը պայմանավորված է կարճ հաղորդագրությունների և նամակագրության աճով:

<u>Ապահովագրական ծախսեր</u>

Կադաստրի կոմիտեի համակարգի 3 ծառայողական մեքենաների ապահովագրական ծախսերի համար անհրաժեշտ է **155.0 հազ.դրամ**:

<u>Գույքի և սարքավորումների վարձակալության ծախսեր</u>

Շենքերի շինությունների վարձակալության ծախսերը նախատեսված են համաձայն սպասարկման գրասենյակների և տարածքային ստորաբաժանումների կողմից կնքված տարածքների վարձակալության պայմանագրերի՝ գումարը կազմում է **8,364.5 հազ.դրամ**:

<u>Գործուղման ծախսեր</u>

<u>Արտասահմանյան գործուղումների ծախսեր</u>

2027 թվականին Հայաստանի Հանրապետությունից դուրս պլանավորվում է 13-16 գործուղում:

Հանրապետությունից դուրս գործուղման ծախսերը կատարվում են հետևյալ ուղղություններով՝ ճանապարհածախս, օրապահիկ, գիշերավարձ, ներքին տրանսպորտ:

*Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը կազմում են **15.000,0 հազ.դրամ**:Ներքին գործուղման ծախսերը կազմում են **2.000,0 հազ.դրամ**:*

Ընդամենը գործուղման ծախսերը կազմում են 17.000,0 հազ.դրամ:

<u>Վարչական ծառայություններ</u>

Պատճենահանման, թարգմանչական, գործավարական և այլ վարչական ծառայություններ համար նախատեսվում է **ընդամենը 500.0 հազ.դրամ**:

<u>Տեղեկատվական ծառայություններ</u>

Նախատեսվում է կատարել հասարակության իրազեկման ծառայությունների իրականացում (բուկլետների տպագրում, թերթերի, ամսագրերի բաժանորդագրություն, թերթերում և այլ ԶԼՄ-ներուն հայտարարությունների հրատարակում, գովազդ, տպագրություն)՝ **ընդամենը 5,000.0 հազ.դրամ**:

<u>Կառավարչական ծառայություններ</u>

Ներքին աուդիտի ծառայություններ՝ **2,400.0 հազ.դրամ:**

<u>Ներկայացուցչական ծախսեր</u>

Կադաստրի կոմիտեն համագործակցում է մի շարք երկրների և միջազգային կազմակերպությունների հետ: 2027թ-ին նախատեսվում է Եվրոգեոգրաֆիքս ասոցացիաի, որի կառավարման խորհրդի անդամ է հանդիսանում ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը, գլխավոր ասամբլեան անցկացնել ՀՀ-ում, որի շրջանակներում Կոմիտեն կհյուրընկալի մոտ 130 պատվիրակների առավել քան 40 երկրներից: Հավելենք նաև, որ միջոցառման իրականացման համար Եվրոգեոգրաֆիքս ասոցացիան իր ֆինանսական միջոցներից կծախսի ևս 30.000 Եվրո:

Ինչպես նաև 2027թ-ին լրանում է Կադաստրի կոմիտեի ստեղծման 30 ամյակը, որի առթիվ նախատեսվում է անկացնել միջոցառումներ:

Վերոնշյալ միջոցառումների կազմակերպման համար նախատեսվել է իրականացնել գնումներ **23.000 հազ. դրամի չափով**:

<u>Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ</u>

Տարածքային ստորաբաժանումներում ազդարարական, հակահրդեհային անվտանգության, տաքսի ծառայության, թվային տեսահսկման համակարգերի տեղադրման, տեսահսկման համակարգերի սպասարկման, կահույքի վերանորոգման, օդորակիչների վերանորոգման, մաքրման ծառայությունների և այլ ծառայությունների համար նախատեսվում է **75,583.9 հազ.դրամ**:

<u>Մասնագիտական ծառայություններ</u>

Տեղեկատվական տեխնոլոգիաների հետ կապված ծառայություններ (հերթի կառավարման համակարգերի սպասարկամ), ARPIS էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովման մշակման և սպասարկման ծառայություններ, գլխավոր սերվերի ծրագրային ապահովման և սպասարման, անվտանգության ապահովման ծառայություններ, տվյալների ցանցի կառավարման ծառայություններ (mulberry համակարգ), իրականացվող հիմնանորոգման աշխատանքների որակի

տեխնիկական հսկողության ծառայության և այլ մասնագիտական ծառայությունների իրականացման աշխատանքների ծախսերը կազմում են **200,000.0 հազ.դրամ**:

Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման, պահպանման ծախսեր

Ընդհանուր համակարգի պահպանման և սպասարկման գրասենյակների օպտիմալացման և նոր խորհրդատվական կենտրոնների ստեղծման նպատակով նախատեսվում է կատարել կոմիտեի վարչական տարածքների ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Ընդամենը ընթացիկ նորոգման գումարը **կազմում է 30,000.0 հազ.դրամ:**

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման ծախսեր

Նախատեսվում է կատարել ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ ավտոմեքենաների 1,290.4 հազ.դրամ, համակարգչային տպիչ, պատճենահանման և այլ սարքավորումների, օդորակիչների սպասարկման և սերվերային սարքավորումների սպասարկման համար՝ 21,999.5 հազ.դրամ, **ընդամենը՝ 23,289.9 հազ.դրամ**:

Գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռք բերման ծախսերը

Նախատեսվում է ձեռք բերել թուղթ, տոներ, քարթրիջ, թմբուկ, գրենական պիտույքներ՝ **55,000.0 հազ.դրամ**:

Տրանսպորտային ծախսեր

Կոմիտեի համակարգում հաշվառված 3 ծառայողական մեքենաների համար նախատեսվում է ձեռք բերել բենզին, յուղեր, ավտոդողեր, այլ նյութեր:

Ընդամենը ծախսը կազմում է **2,567.3 հազ.դրամ**:

Կենցաղային և հանրային սննդի նյութեր

Տնտեսական ապրանքներ, մաքրիչ, ըմպելու ջուր, սանհիգիենիկ և այլ նյութեր ձեռքբերելու համար նախատեսվել է **11,000.0 հազ.դրամ**:

Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին

Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համար նախատեսվել է **1,000.0 հազ.դրամ**

Պարտադիր վճարներ և տույժեր

Միասնական տեղեկանքի, գույքի նկատմամբ իրվունքների պետական գրանցման, պարտադիր վճարների, տուրքերի, ավտոմեքենաների տեխզննման և բնապահպանության, աղբահանության համար նախատեսված է **5,833.4 հազ.դրամ**:

Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում

Կոմիտեի գործունեության հետևանքով առաջացած վնասների վերականգնման համար նախատեսվում է **5,000.0 հազ.դրամ**:

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում

ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 12.1 կետի իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել ք. Երևան Կոմիտաս 35/2 շենքի կապիտալ վերանորոգում: Այս միջոցառման իրականացումը Կադաստրի կոմիտեն նախատեսում է սկսել 2026թ-ից ինչի համար նախաձեռնում է կառավարության որոշման նախագծի շրջանառում համաձայն որի կիրականացվի վերաբաշխում 2026թ-ի ՀՀ բյուջեում և վերոնշյալ նպատակով ֆինանսական միջոցներ կհատկացվի Կադաստրի կոմիտեին:

Հաշվի առնելով, որ ենթադրվում է շինարարական աշխատանքները սկսել ժամանակից ուշ, այդ իսկ պատճառով նախատեսվել է **700,000.0 հազ.դրամ** 2027թ-ի և **200,000.0 հազ.դրամ** 2028թ-ի համար՝ ժամանակացույցից ետ ընկած աշխատանքները ավարտելու համար: Համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի միջոցառման արժեքը կազմել է **1.813.287 հազ.դրամ**, իսկ հայտարարված մրցույթի արձյունքում հաղթող մասնակիցը առաջարկել է **1.595.100 հազ.դրամ** գինը:

Վարչական սարքավորումներ

Ռեֆորմատ իրականացված նոր խորհրդատվական կենտրոնների տեխնիկական հագեցվածության ապահովման, ՀՀ կառավարության 06.11.2025թ.-ի N 1583-Լ որոշման Հավելված N 1-ի 6-րդ կետով հաստատված միջոցառման իրականացման և ամբողջ համակարգի տեխնիկական ապահովման և վերազինման համար, անհրաժեշտ է ձեռք բերել համակարգիչներ, համակարգչային սերվեր, սկաներ, պրինտեր, համապատասխան կահույք՝ սեղաններ, աթոռներ, գրապահարան և այլն:

Ընդամենը վարչական սարքավորումների գնումները կազմում են 175,000.0 հազ.դրամ:

Ոչ նյութական հիմնական միջոցներ

ՀՀ կառավարության 18.11.2021թ.-ի N 1902-Լ որոշման Հավելված N 1 հաստատված Կադաստրի կոմիտեի միջոցառումների 13.2 կետի իրականացման համար անհրաժեշտ է ձեռք բերել ծրագրային ապահովում **48,000.0 հազ.դրամի չափով:**

Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր

ՀՀ տարածքի օդալուսանկարահանման, օրթոֆոտոհատակագծերի և թվային բարձունքային մոդելի ստեղծման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է **584,000.0 հազ.դրամ**: Հայաստանի Հանրապետության տարածքը մասնակի՝ շուրջ 13 500 կմ2 մակերեսով ծածկված է 2013-2014 թթ. ստեղծված օրթոֆոտոհատակագծերով, իսկ ամբողջ տարածքի համար 2021 թվականին իրականացվել է օդատիեզերական լուսանկարահանում, որոնք ամբողջական ժամանակագրական շարք չեն ապահովում և արդիական չեն, հաշվի առնելով վերջին տարիներին ինտենսիվ փոփոխությունները: Հետևաբար չեն կարող կիրառվել ներկա պահին ՀՀ ողջ տարածքի տարածական օբյեկտների տարածաժամանակային մշտադիտարկման համար:

Նախատեսվում է ՀՀ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքները օդալուսանկարահանումներ իրականացնել 10 սմ լուծաչափով, իսկ մնացած տարածքները՝ 20 սմ: Արբանյակային նկարահանումներ իրականացնել 30 սմ լուծաչափով: